

ՍԱՀԱԳՐԱԿԱՆԵՐ

ԱԻՄՈՆ ՄԻՍԱՋԻ ԿՐԿԵԱԾԱՐԵԱՆ
(1923-2011)



ՀՀ ԳԱԱ բղբակից-անդամ (2000), ՀՀ Գրողների Սիմոն (1977) և Հոռմի Տիրերինա Ակադեմիայի անդամ (1986), Փարիզի «Արարատ» Գիտամշակութային Ակադեմիայի անդամ (1994), պատմական գիտութիւնների դոկտոր-պրոֆեսոր Սիմոն Միսայրի Կրկեաչարեանը ծնունդ է 7 Դեկտեմբեր 1923ին, Յունաստանի Արենք քաղաքում, Ադանայից եւ Հաճընից գաղթած ընտանիքում: 1936ին աւարտել է տեղի եօթնամեայ հայկական դպրոց եւ ուսումը շարունակել յունական զիմնազիայում: 1943ից գործոն մասնակցութիւն է բերել Յունաստանը գրաւած իտալ-գերմանական զարիչների դեմ սկսուած դիմադրական շարժմանը, գլխաւորելով ընդյանակեայ կազմակերպութիւն: Դրան զուգընթաց անդամակցել է Արենքի Կոկինիա արուածանում կազմակերպուած գրական խմբակին: 1944ին ընդունուել է Արենքի Կապոդիստրիասի անուան Ազգային Համալսարանը, որտեղ սովորել է մինչեւ 1947 Խորհրդային Հայաստան իր հայրենադարձը: Այս ընթացքում քաղաքական-հասարակական բուն գործունեութիւն է ծառակել Արենքի հայկական համայնքում որպէս Նոր Կեանք օրաթերթի աշխատակից եւ խմբագիր՝ «Քառամ» ծածկանուով: Մեծ նապաստ է բերել Յունաստանում ժաւալուած յունահայերի հայրենադարձութեան կազմակերպման գործին և 1947ի վերջին որպէս կարաւանապետ իրականացրել է 2750 յունահայերի հայրենադարձ: Ընտանիքը հաստատուել է Երեւանում:

Երեւանում, սկզբնական տարիներին, նա զրադուել է նաև կավարժութեամբ՝ որպէս պատմութեան ուսուցիչ աշխատելով մայրաքաղաքի տարրեր դպրոցներում: 1950ին ընդունուել է Երեւանի Խաչատոր Արքունիանի անուան Մանկավարժական Խնաժիտուուրը: Այս գերազանց աւարտելուց յետոյ որոշ ժամանակ եւս պատմութիւն է դասաւանդել Հայաստանի գիտական շրջանների դպրոցներում, միաժամանակ զրադուելով գեղարդուստական գրականութեան բարգմանութեամբ: 1956ին ճենարկել է 1957ին աւարտել է Հոմերոսի Ողիսակածի բարգմանութիւնը: 1959ին լծուել է ասպիրանտուրայի աշխատանքների, ուսումնառութիւնն անցկացնելով Լենիգրադի Համալսարանի Յունաստանի և Հոռմի Պատմութեան Ամրիոնում եւ աշակերտելով Յովսեփ Օքբելուն, Վ. Ստրովիկին, Բորիս Պիոտրովսկուն: 1962ին վերադարձել է Երեւան եւ ընդունուել Ակադեմիայի Պատմութեան Խնաժիտուու, աշխատելով Հին եւ Միջին Դարերի Պատմութեան Բաժնում: 1963ին պաշտպանել է թեկնածուական՝ «Հելլենիստական Թագաւորների Փոխյարարերութիւնները Փոքր Ասիայի եւ Հայաստանի Քաղաքների Հետ» նիւթով: 1980ին պաշտպանել է դոկտորական՝ «Հին Հայաստանի Պետական Կառուցուածքը» նիւթով:

Կրկեաչարեանի պատմագիտական հետազոտութիւնների շրջանակները ներառել են հելլենիստական քաղաքների, Հին Հայաստանի պետական կառուցուածքի, սոցիալ-քաղաքական պատմութեան, հայ-յունական, հայ-հոռնե-

ական, հայ-պարսկական յարաբերութիւնների ոլորտները՝ Ձ.ա. Զ. դարից մինչև Հայաստանու Արշակունիաց Թագաւորութեան անկումը: Նրան զբաղեցրել են նաև հայոց արքաների տիտղոսաշարի, արքայատոհների յաջորդականութեան, հայոց բանակի կազմաւորման հարցերը: Յունահռոմէական սկզբնադրինների հիմամբ նա անդրադարձել է իին հայկական քաղաքների սոցիալական կազմին, քագաւորութեան և բնակչութեան տարրեր խաւերի փոխյարաբերութեանը, պետական կառուցուածքի կազմաւորմանն ու զարգացմանը, նախարարութիւնների ու գործակալութիւնների բնոյրին, քաղաքների վերաբնակեցման և այլ հարցերի:

Կրկեաշարեանի գիտական գործունեութեան մի այլ ասպարեզ էր անտիկ յոյն հեղինակների դասական գործերի հայերեն բարգմանութիւնը և առաջարաններով ու ընդարձակ ժամօքագրութիւններով հրատարակումը: Այդպէս հիմք դրուեց ՀՀ ԳԱ հրատարակչութեամբ լոյս տեսնող «Օտար Աղբիւրները Հայաստանի Եւ Հայերի Մասին» մատենաշարի «Հին Յունական Աղբիւրներ» շարքին (Հին Յունական Աղբիւրներ. Ա. Յովսեպոս Փատիռոս, Դրոն Կոսիռոս, 1976 և Հին Յունական Աղբիւրներ. Բ. Կոտորոս Միկիլիացի, 1985): Նա եղել է նաև հրատարակութեան խմբագիրը ակադեմիկոս Հրաչ Բարբիկեանի բարգմանած նոյն շարքի Կոստանդին Շիրանածինի, Յովհաննես Սկիլիցէսի և Թէոփանէսի Շարունակողի հատորներին: Նա բարգմանել է նաև գեղարդասական գրականութիւն՝ Սովորլէսից, Երիալիդէսից, Արիստոֆանէսից, Վաննալիսից, Անդրանիկովուլոսից, Պանսելինուից և այլ հարցերի:

Իր բեղմնաւոր բարգմանական գործունեութեան համար 1986ին արժանացել է Եղիշէ Չարենցի անուան Գրական Մրցանակին, 2003ին պարգևատրում է «Կանքեղ» գրական մրցանակով, իսկ 2005ին՝ Ս. Էջմիածնի Ս. Սահակ և Ս. Մեսրոպ շրանշանով:

Կրկեաշարեանը ծառալել է նաև մանկավարժական գործունեութիւն: 1986ից դասախուել է Երևանի Պետական Համալսարանում (ԵՊՀ), Էջմիածնի Հոգեւոր Ծեմարանում, դասաւանդելով իին յունարեն, յունահռոմէական աղբիւրներ և հայոց պատմութիւն:

Մինչև իր կեանքի վերջին օրը Կրկեաշարեանը շարունակեց աշխատել ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտում և կատարեց բարգմանութիւններ: Նրա բարգմանած վերջին երկը՝ Հուներոս Մայպիլիսի Ազնի Վեպը, մնաց անաւարտ:

Մինոն Կրկեաշարեանը մահացաւ 5 Յունուար 2011ին, Երևանում:

ԱՐՏԱՇԵՍ ԿՐԿԵԱՇԱՐԵԱՆ
akrkyasharian@yahoo.com



ԵՐՈՒԱՆԴ ԱՐԳԱՍԵԱՆ
(1913-2010)

Հայաստանի բորբագիտական դպրոցի հիմնադիրներից եւ կարկառուն ներկայացուցիչներից՝ պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Երուանդ Ղազարի Սարգսեանը ծննդել է 1913ին Միսիանի շրջանի պատմական Բոնակոր գիլդում: Միջնակարգ կրթութիւնը ստացել է Բարսում, իսկ բարձրագոյնը՝ Լենինգրադի Պետական Հա-

մալսարանում: 1942ին յաջողութեամբ աւարտելով ԽՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիայի Արևելագիտութեան Ինստիտուտի ասպիրանտուրան, վերադարձել է Հայաստան և աշխատանքի անցել ՀԽՍՀ Արտաքին Գործերի Նախարարութիւնում՝ որպէս Թուրքիայի գծով պատասխանատու աշխատակից: Այդ ժամանակաշրջանում նա գործուն մասնակցութիւն է ունեցել Հայկական Հարցին և Թուրքիայի հակահայկական քաղաքականութեանը վերաբերող մի շարք կարեւոր գեկոցազբերի պատրաստմանը, որոնք ուղարկում էին Մոսկու և օգտագործում 1945-1947ին Թուրքիայի նկատմամբ ԽՍՀՄ քաղաքականութիւնը մշակելու նպատակով:

Յետագայում Սարգսեանն աշխատել է Գիտութիւնների Ակադեմիայի համակարգում: Երբ 1958ին Ակադեմիայում հիմնադրուած Արևելագիտութեան Սեկտորի հիման վրայ 1971ին ստեղծուեց Արևելագիտութեան Ինստիտուտը, նա դարձաւ դրա առաջին աշխատակիցներից, և երկար տարիներ ղեկավարեց Թուրքագիտութեան Բաժինը: Նրա ջանքերի շնորհիւ Բաժինը վերածուեց Թուրքիայի նոր և նորագոյն պատմութեան ուսումնասիրութեան և մասնագետների պատրաստման կարեւոր կենտրոնի:

1946ին Սարգսեանը յաջողութեամբ պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւնը: 1963ին, նրա դրկտորական թեզի պաշտպանութիւնը Մոսկուայում վերածել է սուր և սկզբունքային բանավէճի՝ խիստ քաղաքականացուած խորիրային թուրքագիտութեան մուսկովեան դպրոցի ներկայացուցիչների հետ և արժանացել լայն արձագանքների գիտական և հասարակական շրջանակներում: Այդպէս էր հայանում հայկական թուրքագիտութեան հեղինակութիւնը: Նրա թեկնածուական և դրկտորական ատենախօսութիւնները կարեւոր ներդրում են Թուրքիայի և Արևելեան Հայաստանի նոր դարի պատմութեան ուսումնասիրութեան բնագաւառում:

Պրոֆեսոր Սարգսեանի գրչին են պատկանում բազմաթիւ մեմագրութիւններ և աւելի քան 100 այլ գիտական աշխատութիւններ, որոնք իրաւագի մեջ համբաւ են թերել ոչ միայն նրան, այլև հայկական թուրքագիտութեանը: Նրա ամենայաջողուած գիտական աշխատութիւնը Թուրքիան է Նրա Նուածողական Քաղաքականութիւնը Անդրկովկասում 1914-1918 մենագրութիւնն է, որը 1962ին հրատարակուել է ուսերեն, իսկ 1964ին՝ հայերեն: Այս գրքում հեղինակը լայնօրեն օգտագործելով արխիւային և փաներագրական այլ նիւթեր՝ համոզի կերպով ցոյց է տալիս Օսմանեան Կայսրութեան ծառալապաշտական նկրտումներն Անդրկովկասի, զիսառորակը Արևելեան Հայաստանի նկատմամբ, վեր հանում հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման երիտրուրական քաղաքականութեան անմիջական կապը նրա պանթորքիստական զարողական ծրագրերի հետ: Մենագրութեան կարեւոր արդիւնքներից է հեղինակի եզրայանգումն այն մասին, որ թեմալական Թուրքիան հանդէս է եկել որպէս Օսմանեան Կայսրութեան հակահայկական քաղաքականութեան շարունակող: Գիրքը նշանակալից դեր է կատարել «Վարչունականների սերնդի» միջավայրում Թուրքիայի մասին յատակ պատկերացումների ձեւաորման համար: Այն այսօր եւս պահպանում է իր գիտական նշանակութիւնն ու քաղաքական այժմեականութիւնը: 1965ին, Բէյրութում հրատարկուել է նրա Հայերի Ֆիզիկական Ոչնչացման Ծրագրի Իրագործումը Երիտրուրքերի Կողմից 1915-1916 Թուականներին հատորը:

Սարգսեանի գիտական ժառանգութեան մէջ կարեւոր տեղ է զբաղեցնում նաև *Politika Osmanskogo Pravitelstva V Zapadnoy Armenii I Derjavi V Posledney Chetverti XIX I Nachale XX VV* (Օսմանեան Կայսրութեան քաղաքականութիւնը Արևմտեան Հայաստանում և պետութիւնները ԺՇ. դարի վերջին քառորդում և Ի. դարի սկզբին) ստուարածաւալ մենագրութիւնը, որը լոյս է տեսել 1972ին ուսերեւն: Օգտագործուած մեծարանակ փաստացի նիւթի վերլուծութեամբ և ընդհանրացումների բարձր նակարդակով, այդ գիրը իհմնարար ներդրում է Հայկական Հարցի ուսումնասիրութեան բնագաւառում:

Հայաստանում պրոֆեսոր Սարգսեանն առաջիններից է ծեռնամուխ եղել բուրքական պատմագրութեան մէջ լայն տարածում գտած՝ Հայաստանի և հայ ժողովրդի պատմութիւնը խեղաքիւրող հայեցակարգերի քննական վերլուծութեանը, դրանց հակագիտական բնոյրի բացայացմանը: Նրա և նորեւն Սահակեանի հեղինակած Հայ ժողովրդի Նոր Ծրամի Պատմութեան Նենցափոխումը Թուրք Պատմագրութեան Մէջ գիրը (1963) վերահրատարակուել է Թեհրանում, բարգմանուել անգլերեւն և հրատարակուել նաև ԱՄՆում (1965):

Նեռես Խորհրդային տարիններին պրոֆեսոր Սարգսեանը սկսեց համակողմանի ուսումնասիրել նաև 1920 բուականի հայ-բուրքական պատերազմին առնչուող բազմաթիւ արտաքին հանգամանքների բարդ կծիկը: Նա առաջիններից էր, ով ծեռնամուխ եղաւ այդ խնդիրների վերաբերեալ նուկովեան և երեւանեան արխիմների գաղտնի ֆոնդերում պահուող հարուստ, սակայն և յաճախակի իրարամերծ բնոյրի փաստագաւերագրական նիւթի քննական հետազոտմանը: Նրա տարինների լարուած աշխատանքի արդինքները հնարաւոր եղաւ արժեքաւոր մենագրութեան տեսքով հրատարակել միայն անկախ Հայաստանում՝ Հաւադիր Գործարք Հայաստան, Առասատան, Թուրքիա (1995) խորագրով: Նրա գրչին են պատկանում նաև՝ *Polojenie Trudiashtchiksia Mass V Sovremennoy Turtsii*, (Աշխատաւոր զանգուածների դպրինը ժամանակակից Թուրքայում), (1955), *Agrarnaya Politika Osmanskogo Pravitelstva V Zapadnoy Armenii Vo Vtoroy Polovine XIX Veka* (Օսմանեան կառավարութեան հոդային քաղաքականութիւնը Արևմտեան Հայաստանում ԺՇ. դարի երկրորդ կեսին), (1957), *Velikaya Oktiabrskaya Sotsialisticheskaya Revolutsia I Natsionalno-Osvoboditel'naya Borba V Turtsii (1918-1922)* (Հոկտեմբերեան սոցիալիստական մեծ յեղափոխութիւնը և ազգային-ազատագրական պայքարը Թուրքիայում (1918-1922)), (1958):

Սարգսեանը 1950-1980ականների հայկական գիտական կենաքի գործուն մասնակիցներից էր: Հետաքրքիր զեկուցումներով նա յաճախակի հանդէս է եկել գիտաժողովներում, այդ թում՝ միջազգային: Նա ակտիվորեւ մասնակցել է գիտական բանագլեներին ու քննարկումներին, եղել մի շարք խճային մենագրութիւնների ու յօդուածների ժողովածումների հեղինակակից և պատասխանատու խմբագիր, դեկանական և ընդդիմախօսութիւնների բազմաթիւ առենախօսութիւններ, իր հարուստ գիտելիքները փոխանցելով տասնեակ աշակերտների և կրտսեր գործընկերների:

1990ականների կեսերին մտաւորականութեան համար Հայաստանում ստեղծուած ծանր կենցաղային պայմաններն ստիպեցին Սարգսեանին տեղափոխուել ԱՄՆ: Սակայն օտարութեան մէջ ես նա շարունակեց անխոնց ծառայել գիտութեանը. ովկիանոսի այն ափից Երևան էին հասնում նրա յօդ-

ուածները Թուրքիայի հականայ քաղաքականութեան տարրեր դրսեւրում ների վերաբերեալ, որոնք պարբերաբար լոյս էին տեսնում աֆինուրահայ մամուլի էօերում: Հայաստանի բուրքագլւտները, պրոֆեսոր Սարգսեանի քազմաքի գործնկերները եւ աշակերտները միշտ վառ կը պահեն գիտութեան երախտաւորի եւ քարի մարդու կերպարը:

Երուանդ Սարգսեանն իր մահկանացուն կնուց 11 Մարտի 2010ին, Գլենդեյլ:

ՈՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏԵԱՆ
safrastyan@policy.hu



ԱՆԴՐԱՎՆԻԿ ԶԵԼԵՊԵԱՆ (1922-2011)

Հայկական Ցեղասպանութեամբ որպացած սերունդի ներկայացուցիչ, քժկական նկարագրող, գծագրող, պատմաբան Դոկտ. Անդրանիկ Զելեպեան ծնած է Քեօրքինե, Շեսապ, 11 Մարտ 1922ին: Ան անդրանիկ զարգաց էր Խաչեր Զելեպեանի եւ Գարուն Արեւանի, որոնք անուսնացեր էին 1920ին, Տէյր Արիյէի քեմփին մէջ, Սուրիա, երբ կը վերադառնային իրենց պապենական բնօրրանը՝ 1915ի ահաւոր ջարդերէն եար:

Անդրանիկ իր հայրը կը կորսնցնէ Փետրուար 1930ին: Փայլուն նիշերով աւարտելով Քեօրքինեի Հայ Աւետարանական Վարժարանը, ան կ'արժանանայ կորաբոշակի՝ շարունակելու իր ուսումը Ալեփի Զոլէճին մէջ (Հայեա), զոր Ցիշատակութեամբ աւարտելով 1944ին, կ'արժանանայ Ալբունեան մրցանակին: Աւարտելէ եար, տարի մը կը դասաւանդէ Քեօրքինեի իր վարժարանին մէջ, ապա կը վերադառնայ Ալեփի Զոլէճ, որ 1945-49ին կը դասաւանդէ անզերէն եւ ուսուութիւն:

Զելեպեան 1949ին կը հաստատուի Պէյրութ, ուր տարի մը անզերէն կը դասաւանդէ ՀԲԸ Յովակիմեան-Մանուկեան Մանշերու Երկրորդական Վարժարանին մէջ, ապա պաշտօնի կ'անցնի Պէյրութի Ամերիկեան Համալսարանի բնախօսութեան բաժանմունքին մէջ, ուր կը մնայ 27 տարի իրեն գիտահետազոտողի օգնական եւ գիտաշխատանոցի դասատու: Հոն զտնուած իր վերջին տասնչորս տարիներուն ան կը գործէ իրեն քժկական գծագրիչ ու պատկերող, առանձինն նկարագրութեամբ քժկագիտական երեք դասագիրքեր: Միաժամանակ կ'աշխատակցի Զանասէրին, Սփիտիին եւ Նայիրիին:

1977ին Զելեպեան ընտանեօր կը գաղթ Միացեալ Նահանգներ ու կը հաստատուի Տիբրոյք, ստանձնելով տեղի ՀԲԸ Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարանին հանրային յարաբերութեանց պաշտօնը մինչև 1991, միաժամանակ աշխատակցելով հայկական նամուլին՝ Նոր Օր, Պայքար, Նոր Կեամք, The Armenian Observer, The Armenian Reporter: Զելեպեան կ'աշխատակցէր նաև Military History ամսագրին՝ հայոց պատմութեան մասին նիրերով:

1984ին, Լու Անձելըսի Աեր Հրատարակչառունեն կը հրատարակէ Զօրավար Անդրանիկ եւ Հայ Ցեղափոխական Շարժումը հասորը, որ

կ'արժանանայ վերահրատակութեան և Հայաստանի մէջ կը տպուի 75000 տպաքանակով: Գիրքին հասոյքը Զելեպեան կը նուիրէ Ղարաբաղի ազատանարտիկներուն: Գիրքը աւելի եսոք կը քարգմանուի անգլերէնի՝ *General Atmank and the Armenian Revolutionary Movement* (1988), բրերէնի (2003), Յունարէնի (2005) ու սպաներէնի (Արժանին, 2006): 1989ին, ԵՊՀ Պատմութեան Բաժանմունքին մէջ ան կը պաշտպանէ իր թեզը, որուն իրեւ արդինք անոր կը շնորհուի դոկտորականի տիտղոս:

1991ին Զելեպեան կը հրատարակէ իր երկրորդ գիրքը՝ *Յեղափոխական Հեմքեր*, որ կը քարգմանուի անգլերէնի՝ *Armenian Revolutionary Figures* (1992): 1999ին լոյս կը տեսնէ *Armenia After the Coming of Islam* հատորը, որ կարժանանայ վերահրատարակութեան: 2003ին Զելեպեան կը հրատարակէ իր չորրորդ գիրքը՝ *Դրօ*, որ կը հետազոտէ Դրաստամատ Կանայեանի կեանքը: Այս գիրքը ես կը քարգմանուի անգլերէնի՝ *Dro (Drtastamat Kanayan) Armenia's First Defense Minister of the Modern Era* (2009):

Զելեպեան գործակցած է Դոկտոր Արենի Ջըրի հետ: Այս գործակցութեան արդինքը կ'ըլլայ Դոկտոր Ջըրի *The Lions of Marash* գիրքին ծնունդը, անտիպ Ակարներով (Albany, State University of New York Press, 1973): Դոկտոր Ջըր պաշտօնավարած էր Սերծատը Արենի Նպաստամատոյցին մէջ և 1919ին տեղափոխուած Սարաշ, որը գլխաւորած էր Նպաստամատոյցի գործունեութիւնը:

Զելեպեան խմբագրած է Հենրի Ուիլֆրիտ Կլորլըրի անձնական յուշերը՝ *Interned in Ourfa* (Պաշտօնակոչուած Ռոբֆայի մէջ) (1969, Պէյրութ):

Դոկտոր Զելեպեան տուած է քազմաքի դասախոսութիւններ, արժանացած քազմաքի մետաղներու: Սառութիլսի քաղաքապետը 2005ին օր մը կը հոչակէ անոր անուամբ՝ առ ի գնահատանք, քաղաքին անուան տարածման համար Զելեպեանի բերած նպաստին: 1995ին բեսապցիր կը պատուեն իրենց հայրենակիցը:

Անդրանիկ Զելեպեան մահացաւ 13 Ապրիլ 2011ին, Սառութիլս, Սիշիկու:

ՎԱՀԵ ԱԲԵԼԵԱՆ
vapelian@yahoo.com

ԼՈՒՍԻԿ ՍԱՔՍՈՒԴԵԱՆ (1934-2011)

Բանասիրական գիտութիւնների բեկնածու, դոցենտ, ԵՊՀ երկարամեայ եւ սիրուած դասախոս Լուսիկ Սեղրակի Սաքսուդեանը ծնուել է 1934 Սեպտեմբերի 15ին, Զինաստանի Մանչուրիա քաղաքու: Նախնիները եղել են Արեւմտեան Հայաստանի Խիզան գաւառից: 1936ին ընտանիքը հայրենադարձուել է եւ հաստատուել Երևանում: 1942-1952՝ սովորել է Շաքիու անուան միջնակարգ դպրոցում: 1952ին ընդունուել է ԵՊՀ Մեխանիկայի Եւ Մաթեմատիկայի Բաժին: Մէկ տարի յետոյ նորից է դիմել Համալսարան՝ այս անգամ ընտրելով քանակերի մասնագիտութիւնը: Համալսարանը գերազանցութեամբ աւարտելուց յետոյ աշխատել է ՀՍՍՀ ԳԱ Լեզուի Ինստիտուտի մերենական քարգմանութեան խնդիրներով գրադրուդ գիտական խմբում: 1961ին ընդունուել է ԵՊՀ ասպիրանտուրա-

«Ժամանակակից Հայոց Լեզու» մասնագիտութեանը: Անմիջապէս անցել է դասախոսական աշխատանքի: Բացի ժամանակակից հայոց լեզուի խնդիրներից՝ զրադարձ է բարգմանութեան տեսութեան հարցերով: 1973ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսութիւն «Բայանուն Գոյականը Ժամանակակից Հայերէնուն» թեմայով: Ունեցել է նաև բազում օտարազգի ուսանողներ՝ Ֆրանսիայից, Հոլանդիայից, Խոտայիայից, ինչպէս նաև ԽԱՀԱ նախկին հանրապետութիւններից: ԵՊՀում դասաւանդել է մինչեւ 2005:

Լուսիկ Մարտունեանի հեղինակած գրքերն են՝ Բայանուն Գոյականը Ժամանակակից Հայերէնուն (1984), Հայերէնի Խմբնուուց (1999), Հայերէնուու Բառարան (2003): Գիտական մամուլում հանդէս է նկել յօդուածներով:

Լուսիկ Մարտունեանը մահացել է 24 Մայիս 2011ին, Երեւանում:

ՄԱՐԻԱՄ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
mkirakossian@yahoo.com

ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ (1933-2011)

Հայագէտ-աղբիրագէտ, կովկասագէտ, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտի գլխաւոր մասնագէտ, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Պարոյր Մամրեթի Մուրադեանը ծնուել է 1933 Մարտի 25ին Զաւախիքի Ղաջո (հայկական տարբերակով՝ Փապար) գիւղում: 1952ին աւարտել է Ազարեթի միջնակարգ դպրոցը: 1953-1958՝ սովորել եւ աւարտել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտետի Արեւելեան (պարսկական) բաժինը: 1960-1962՝ սովորել է Հայաստանի ԳԱ ասպիրանտուրայում՝ ուսումնառութիւնն անցկացնելով Թրիլիսիի Պետական Համալսարանուն: 1963ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսութիւն «Հայ-Վրացական Մատենագրական Փոխյարաբերութիւնները ԺՇ. Դարուն» նիւթով: Նոյն տարին հրատարակել է Մայեաք Նովան Ըստ Վրացական Աղբիրների. Բանասիրական Պրատումներ Եւ Նիւթեր հատորը: 1963-1970՝ աշխատել է Մամուկ Արենեանի անուան Գրականութեան Ինստիտուտի Հին Գրականութեան Բաժնում: 1970ին աշխատել է ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտետում, իսկ 1976ից՝ նաև ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտում, որտեղ կազմարել եւ գլխաւորել է Կովկասագիտութեան Եւ Բիւզանդագիտութեան Բաժնը (այժմ՝ Քրիստոնեայ Արեւելք): 1986ին պաշտպանել է դոկտորական ատենախոսութիւն «Վրաստանի Հայերէն Արձանագրութիւնները. Զարդի Եւ Կախէթի» նիւթով: 1989ին ստացել է պրոֆեսորի կոչում, դարձել է «Մեսրոպ Մաշտոց» մրցանակի դափնեկիր: 1991-1992 ուսումնական տարում կովկասագիտութեան դասընթաց է վարել Գերմանիայում (Տրիբի Համալսարան): 2002-2003՝ դասաւանդել է Հրաշեայ Աճառեանի անուան Համալսարանում: Երկար տարիներ դասաւանդելով ԵՊՀում աճեցրել է բազմաթիւ երիտասարդ մասնագէտներ:

Մուրադեանը պատմա-բանասիրական լայն ընդգրկում ունեցող գիտնական էր եւ խոր հետք է բողել Հայաստանուն կովկասագիտութեան ձեւալորման ու զարգացման բնագաւառում: Նա բողել է գիտական հսկայական ժառանգութիւն՝ աւելի քան 300 տպագիր աշխատութիւն: Նշանակալի է նրա վաստակը հայոց միջնադարեան մատենագրութեան, մշակոյթի, ճարտարա-

պետութեան, պատմական սկզբնադրիւների ու վիմագրական յուշարձանների հիմնարար հետազոտութիւնների բնագաւառում:

Հայագիտութեան համար խոչոր երեսոյք եր Մուրադեանի կողմից Վրաց Ժամանակագրութիւն (1207-1318) ի հին Վրացերէնից հայերէնի ամրողական բարզմանութիւնն ու հրատարակումը (1971): Մնայուն եւ գիտական մեծարժեք հետազոտութիւններ են նաև՝ «Armeno-Georgica» մատենաշարով հրապարակուած Մուրադեանի մենագրութիւնները՝ Հայաստանի Վրացերէն Արծանագրութիւնները. Ալրիւրագիտական Քննութիւն/Gruzinskaya Epigrafika Armenii (Վրաստանի հայերէն արձանագրութիւնները) (2 հատոր, 1977), Ազարանգեղոսի Հիմ Վրացերէն Խմբագրութիւնները (1982), Armenianianki Epigrafika Gruzi: Kartli I Kakheti (Վրաստանի հայերէն արձանագրութիւնները. Քարքի եւ Կախէրի, 1985), Ծոլշանիկի Վկայարանութիւնը. Բնագրեր եւ Հետազոտութիւններ (1996):

Նրա ուսումնասիրութիւններին յատուկ է գիտական հիմնաւորուածութիւնը, առաջադրուող եզրակացութիւնների թարմութիւնն ու համարձակութիւնը, գիտական նորոյքը: Պրոֆ. Մուրադեանի գիտական գործունեութեանը բնութագրական է գիտական հետեւողականութիւնը եւ ուսումնասիրութեան խնդիրների լայն շրջանակի ընդորկումը: Նա ծառակել է գիտա-կազմակերպչական աշխուժ գործունեութիւն. մեծ վաստակ ունի ինչպէս հայագիտական նոր ուսումնասիրութիւնների ծրագրաւորման, նոր կայրերի ստեղծման, այնպէս է անուանի հայագէտ գիտնականների վաստակի գնահատման ու նորովի ներկայացման, հայագիտական նոր հրապարակումների ու շարքերի ստեղծման ու խմբագրման ասպարեզներում:

Նա կազմել ու խմբագրել է «Էռովկաս եւ Բիգանդիա», «Հայագիտական Հետազոտութիւններ», «Հայագիտական Մատենադարան», «Յուշարձան» մատենաշարերը, խմբագրել շատ հայագէտների մենագրութիւններ, կազմել եւ հրատարակել է անուանի հայագէտների տպագիր եւ անտիպ գիտական ժառանգութիւնը ներկայացնող ժողովածուներ (Նիկողայոս Մառ, Յովելի Օրբելի, Լեոն Խաչիկեան, Լեոն Սելիխուել-Բեկ, Երուանդ Տեր-Մինասեան, Մկրտիչ Ներսիսեան եւ այլք):

Պարոյք Մուրադեանը եղել է գիտական, գիտամեթոդական ու խմբագրական մի շարք խորհուրդների անդամ: Երկար տարիներ եղել է ՀՀ Բարձրագոյն Որակաւորման Յանձնախմբի Ընդհանուր (համաշխարհային պատմութիւն) մասնագիտական խորհրդի և ՀՀ ԳԱԱ Պատմաբանասիրական Հանդեմունք խմբագրական խորհրդի անդամ: Աշխատակցել է Բէյրութում լոյս տեսնող Հայկագիւն Հայագիտական Հանդեմունքու («Բնագրագիտական Դիտարկումներ Խորենացու Պատմութեան Հեղինակային Խսկագիրը Վերականգնելու Առնչութեանը» (Հտր. Ի. Ա.), «Մոլուս Խորենացու Պատմութեան Ներսէս Լաճրունացու Օրինակը» (Հտր. Ի. Գ.), «Դիտարկումներ Աւանդարար Ս. Մեսրոպի Ընդօրինակութիւն Համարուող Անտարանի Ծուրջ» (Հտր. Ի. Գ.): Գիտական զեկուցումներով մասնակցել է միջազգային բազմաթիւ գիտաժողովների ու կոնգրեսների ինչպէս Հայաստանում, այնպէս է արտասահմանեան շատ երկներում, Հայաստանում կազմակերպել է «Քրիստոնեայ Արեւելք» միջազգային գիտաժողովը եւ հրատարակել նրա նիրերը:

Պարոյք Մուրադեանը բազմից արձագանքել է պատմութեան կեղծարարութիւններին եւ պարբերական մամուլի ու գիտական հանդէսների էջերում

հանդէս եկել սուր գրախօսութիւններով։ Աղբքաջանական կեղծարարութիւնների վերաբերեալ նորա հրապարակումները ամփոփուել են *Istoriya-Pamyat Pokolenii: Problemi Istorii Nagornogo Karabakha* (Պատմութիւնը ժողովրդի յիշողութիւնն է) ուստեղև ժողովածուի մ.ց (1990):

Պարույր Սուրանեանը մահացաւ 21 Հունիս 2011ին, Երևանում:

ՀՀ ԳԱԱ ՄՐԵՒԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԲԱՐՁՐԱԿԵՐ

(1927-2011)

Համաշխարհային բիզունդագիտութիւնը եւ հայագիտութիւնը մեծագոյն կորուստ կրեցին: Կեանքի 84րդ տարում իր մահկանացուն կնքեց ականատր զիտնական, ՀՀ ԳԱԱ, Աքենքի Ակադեմիայի եւ Հռոմի Տիրերինա Արուեստի, Գրականութեան եւ Գիտութեան Ակադեմիայի ակադեմիկոս Հրաչյանի Բարորիկեանը:

Պատմական գիտութիւնների դոկտոր Հրաչ Բարբիկեանը ծնունդ է 1927ին Արէնքում, բանասէր-հրապարակախօսի ընտանիքում: Նախնական կրութիւնը ստացել է տեղի հայկական վարժարանում: 1945ին աւարտել է յունական գիմնազիան: 1946ին ընտանիքով ներգաղթել է Հայաստան: 1953ին գերազանցութեամբ աւարտել է ԵՊՀ Պատմութեան ֆակուլտետը: Ուսումնառութիւնը շարունակել է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի ասպիրանտուրայում՝ Լենինգրադում ակադեմիկոս Յովսէփ Օրբելու ղեկավարութեամբ: 1958ին Լենինգրադի Պետական Համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն «Պավիկեան Շարժնան Պատմութեան Ուսումնառութիւններ» թեմայով, որը որութենով լոյս է տեսել Երեանում (1961): 1971ին պաշտպանել է դոկտորական ատենախօսութիւն «Քիոզանդական Դիգենիս Ակրիտաս Էպոսը Եւ Նրա Նշանակութիւնը Հայագիտութեան Համար» թեմայով:

1957ից աշխատել է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտում, 1980-2010՝ ղեկավարել է Ինստիտուտի Միջին Դարերի Պատմութեան բաժինը, եղել է գյուղական գիտաշխատող, պատրաստել բազմաթիւ մասնագետներ:

Ծուրջ 150 գիտական յօդուածներից զատ, լրյա է ընծայել 17 գիրք: «Օտար Աղբիւրները Հայաստանի Եւ Հայերի Մասին. Բիոգանդական Աղբիւրներ» մատենաշարով հրատարակել է բիոգանդական մի շարք հեղինակների աշխատութիւնների հայերէն թարգմանութիւնները՝ ուսումնասիրութեամբ ու ծանօթագրութիւններով (Թրոկովիս Կեսարացի (1967), Կոնսուանդիմ Ծիրանածին (1970), Յովհաննէս Սկիլիցկւ (1979), Թէոփաննէս Խոստովանոյ. Ժամանակագրութիւն (1983), Թէոփաննէսի Շարունակող. Ժամանակագրութիւն (1990), Պարքենիս Արենացի. ԳԱ «Գրական Յուշարձաններ» մատենաշարով հայերէն հրատարակել է Դիգենիս Աղբիւրաս դիցազնավէպը, Մատթէոս Ունհայեցու Ժամանակագրութիւնի աշխարհաբար թարգմանութիւնը (1973), Թրոկովիս Կեսարացու Գաղտնի Պատմութիւնը (1967), Յունական Արխիւային Փաստարդեր Հայ-Յունական Յարաբերութիւնների Մասին Առաջին Հանրապետութեան Ծրագրում (1918-1920) աշխատութիւնը (1998):

Հայ-Բիզանդիական Հետազոտություններ (Հոր. 1 և 2, 2002) յօդուածների ժողովածովի համար Բարբիկեանն արժանացել է ՀՀ Նախագահի Մրցանակի: Յունարէնով իրատարակել է «Բիզանդիան Հայկական աղքարներում» (1981), «Բիզանդիա Եւ Հայաստան» (1991), «Գարաների Բիզանդիական Ազնուականական Ընտանիքը» (1993) գրքերը: Բարբիկեանը մահուանից առաջ հասցրել էր աւարտել Սիրայէ Աստալիատէսի Պատմութիւնը և Իոաննիս Կ. Խասիուտիսի Պատմական Աւանդոյք Եւ Քաղաքական Իրապաշտութիւնը. Յունական Քաղաքականութիւնը Հայկական Հարցի Վերաբերեալ 1876-1996 թթ. աշխատութիւնների բարգմանութիւնները:

Ծանրակշիռ գիտական ժառանգութեան համար 1980ին ընտրուել է Արէնքի Ակադեմիայի, 1987ին՝ Հռոմի Տիրերինա Արտեստի, Գրականութեան Եւ Գիտութեան Ակադեմիայի, 1996ին՝ ՀՀ ԳԱԱ իսկական անդամ: Նա 1995ից Հայաստանի Գրողների Սիորեան անդամ էր:

1981ին Բարբիկեանը դարձել է Յունատանի Բիզանդիական Հետազութութիւնների Ընկերութեան, ապա Յունական Քաղաքակրթութեան Հաստատութեան պատուաւոր անդամ, արժանացել է ՀՀ ԳԱԱ Մեսրոպ Մաշտոց մրցանակի, Սալոնիկի Արխատուտէկան Համալսարանի Արխատուտէկի ամուսնությանը:

Լայն ու ընդգրկուն էր Բարբիկեանի գիտական հետազութութիւնների շրջանակը: Նրա վաղ շրջանի ուսումնասիրութիւնները նույրուած են Պատմիկեան Շարժմանը: Ակադեմիկոսի գիտական գործունեութեան մեջ Բագրատունեաց և յետ-Բագրատունեաց դարաշրջանների Հայաստանի ու Բիզանդիայի բազմարնոյք կապերի մանրազնին ըննութիւնն առանձնայատուկ տեղ է գրաւում: Բարբիկեանը շեշտակիօրէն ընդլայնեց հիմնահարցի աղքարագիտական յենքը՝ շրջանառութեան դնելով բիզանդիական աղքարների մի ամրող շարք:

Բարբիկեանը մեծ վաստակ ունի նաև վիմագիր արձանագրութիւնների ու կնիքների ուսումնասիրութեան բնագաւառում: Առաջինը Բարբիկեանն է ընթերցել Գառնիի բաղնիքի յունարէն յայտնի արձանագրութիւնը: Նա հայոց պատմութեան ակադեմական նոր բազմահաստորեակի խմբագրական խորհրդի անդամ էր, երկրորդ հատորի պատասխանատու խմբագիրը:

Գիտնականի ուսումնասիրութիւններում առանձնայատուկ տեղ է գրաւում Կիլիկեան Հայաստանի և Բիզանդիայի կապերի հետազութումը:

Հրաշ Բարբիկեան մարդու, բաղարացու և գիտնականի բարոյական բարձր նկարագրի յատկանշական կողմերից էին ուղղամտութիւնն ու սկզբունքայնութիւնը: Նրա անսահման բարութիւնն ու հոգատարութիւնը նկատելի էին իր գործունեութեան բոլոր ոլորտներում: Նա յատկապես ուշադիր էր նրիտասարդ գիտնական սերնդի նկատմամբ:

Հրաշ Բարբիկեանը մահացաւ 17 Օգոստոս 2011ին, Երևանում:

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹԵԱԸՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՆԵՐՆԻ ԱՆԱՆԵԱՆ (1938-2011)

Գրականագիտ, բանասիրական գիտութիւնների դոկտոր Նելլի Անանեանը ծնուել է 1938 Ապրիլի 3ին, Երևանում, արձակագիր Վահրանգ Անանեանի ընտանիքում:

Նելլի Անանեանը իմ սերմադակիցն էր: Աւելին, ուսանողական տարիների իմ դասընկերը: Այն հեռաւոր 1955-60ականներին, ամրող հինգ տարի ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտետի Հայոց Լեզուի և Գրականութեան Բաժնի ուսանողներ էինք, ուսանողական տարիների ջերմ ընկերակցութեամբ, նոյն լարանում, դասերից յետոյ տարբեր հաւաքների մեր մասնակցութեամբ: Մնաց տարբեր շրջաններից եկած ուսանողներս, մի որիշ հայեացրով էինք նայում քաղաքաբնակների եւ, անշուշտ, աւելի ակնածանրով՝ Նելլիին: Շե՞որ նա այն օրերին հանրածանօթ, բոլորին շատ սիրելի գորդ Վահրանգ Անանեանի դուստրն էր: Իսկ Նելլին մի շատ պարզ, համեստ աղջկէ էր, մեր դասընկերն էր, հագնում էր բոլորի նման, բոլորին վերաբերում էր յարգալից, բոլորի ընկերն էր, թէեւ նրա ընկերների շրջապատը չէր սահմանափակում մեզանով: Հօր անոնք չէր խանգարում, որ նա նաև ուսանողուիի լիներ՝ սեփական ջանադրութեամբ:

Մարդկային այդ յատկանիշները եւ հետաքրքրասիրութիւնը գրականութեան նկատմամբ պայմանաւորեցին, որ յետագայում նա ամբողջովին նոյնուի գրականագիտութեանը՝ գիտական ու մանկավարժական աշխատանքի:

1965ին ընդունել է Հայաստանի ԳԱ Սանուկ Արեդեանի անուան Գրականութեան Ինստիտուտի ասպիրանտուրան՝ նոր գրականութեան գծով: 1969ին դարձել է Ինստիտուտի առաջատար գիտաշխատող: 1971ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսութիւն, 1994ին դոկտորական: 1998ից դասաւանդել է Երևանի Մովսէ Խորենացի Համալսարանում, 1999ից Թատրոնի Եւ Կիմոյի Պետական Ինստիտուտում իրեւ պրոֆեսոր:

Անանեանի գիտական հետաքրքրութիւնները առանձապէս ժարի երկրորդ կեսի գրականութեան ու գրական ըննադասութեան պատմական շրջագծում էին: Սակայն՝ ‘շեղում’ը պայմանաւորուած էր իր հօր նկատմամբ ոնեցած սիրով, որ նրան մղեց ուսումնասիրելու նաև հնագոյն շրջանի գրականութիւնը: Նելլին կազմեց, առաջարան գրեց, հրատարակութեան պատրաստեց Անանեանի քառահատորը (1984): Նոյնքան ուշագրաւ էր գրողի հարիւրամեայ յորելեանի առիրով լոյս տեսած երկիատոր ժողովածուն, իր առաջարանով (2005): Սակայն, անաւարտ մնաց Անանեանի երկերի հրատարակութիւնը, անտիպ մնացին նրա Հայաստանի Կենդանական Աշխարհը բազմահատոր մենագրութեան վերջին հատորները: Իր ուսումնասիրութիւնները տպագրուել են գիտական մանուկամ և Գրականութեան Ինստիտուտի հետեւալ հրատարակութիւններում Գրական Ակադեմիա («19-րդ Դարի 50-60-ական թուականների Արեւատահայ Ռուսական գրականութիւնը», 1976), Հայ Քննադասութեան Պատմութիւն, (Հտր. 2, 1998), Հայ Վեպի Պատմութիւն (2006) եւն.: Կազմել է Հայ Քննադասուկան Մորի Պատմութեան Մատենագիտութիւն, 1794-1920 աշխատութիւնը (1987, համահեղինակ՝ Լատրա Մորադեան): Առանձին գրքերով լոյս են տեսել նրան Արեւատահայ Վիպագրութիւն (1992) մենագրութիւնները: Մասնակցել է

եւ զեկուցումներ կարդացել բազմաթիւ գիտաժողովներում, պարզեւատրուել մի շարք պատուզընթերով:

Անձնական կեանքում Նելլի Անանեանը խաղաղ շապեց: Նա մէնակ, առանց ամուսնու, դժուարութեամբ մնեացրեց երկու գաւակներին: Ամուսինը, որ սփիտքահայ ուսանող էր, գերադասեց ապրել արտերկրում, իսկ Նելլին, որ հայրենի բնաշխարհի սիրով տարուած Վախթանգի դուստրն էր, չկարդացաւ թողնել իր ոստանը: «Ինչպէս թողնեմ ու գնամ» մտորումը, ըստ Նելլիի վկայութեան, առիթ է դարձել որ Համօ Սահեանը, որ մօտիկից գիտէր Նելլիին, գրի իր յայտնի «Ախր Ես Ինչպէս Վեր Կենամ Գնամ» բանաստեղծութիւնը: Նելլին մտերին էր հայ յայտնի նկարիչների հետ: Մինաս Աւետիսեանը, Միեր Արեդեանը, Ալեքսանդր Գրիգորեանը նկարել էին նրա դիմանկարը: Նրա բարեկամներից էր Յակոբ Յակոբեանը, որը հրապորուած էր Անանեանի ստեղծագործութեամբ եւ նկարել էր գրողի դիմանկարը:

Նելլի Անանեանը մահացաւ 4 Հոկտեմբեր 2011 ին, Երևանում:

ՎԱԶԳԵՆ ԳԱԲՐԻԵԼԵԱՆ

ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ

(1936-2011)

Պատմաբան Հայկ Արամի Գրիգորեանը ծնած էր Պատմատ, 14 Փետրուար 1922ին, ապա անցած Երուսաղէմ 1936ին եւ աւարտած Ս. Յակոբեանց Վանքի ճեմարանը 1941ին: Անոր մնայուն աշխատանքը կը կազմէ *Lives and Times of the Armenian Patriarchs of Jerusalem* ծառալուն հատորը որ արդիւնքն է տասնամեայ ուսումնասիրութեան եւ կ'ընդգրկէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան 1400 տարիներու պատմութիւնը: Մեծապէս արժենորելով հանդերձ պատմական դերակատարութիւն ունեցած Երուսաղէմի շարք մը պատրիարքները եւ զմահատելով հանդերձ Պատրիարքութեան գոյութիւնը Երուսաղէմի մէջ՝ իբրև հիմնական գործուն տեղի հայութեան գոյատեւման համար, Գրիգորեան անզիջող է կարգ մը ապիկար, անպատասխանառու, անձնասէր եւ կաշառակեր պատրիարքներու զնահատման մէջ:

Գրիգորեան մահացաւ 5 Հոկտեմբեր 2011 ին, Վէճ Նայս, Մ. Նահանգներ:

ՀՀՀ



ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻՉԵԱՆ

(1926-2011)

2011ը, դժբախտաբար, Հայաստանի Հանրապետութեան մշակութային-գիտական կեանքի էջերում արձանագրուեց կորստի ցաւալի իրողութիւններով: Դրանցից ծանր էր կորուստը Հայաստան ներգաղթած յունահայ լաւագոյն մեր շոր մտաւորականների՝ յունագէտ, բարգմանիչ, պատմաբան Սիմոն Կրկեսաշարեանի, բիուզանդագէտ Հրաչ Բարբիկեանի, երաժշտագէտ Նիկոլոս Թահմիջեանի եւ գրող, բարգմանիչ, ազնուագոյն մտաւորական ու մշակ, Կարպիս Սորենեանի:

Հայ անուանի երաժշտագէտ, հանրապետութեան արուեստի վաստակաւոր գործիչ, արուեստագիտութեան դոկտոր, պրոֆեսոր, Մաշտոցեան Մատե-

նադարանի բազմամեայ գիտաշխատակից Նիկոլոս Թահմիզեանը ծնուել է 1926 Մայիսի 9ին Արենքում, հայ տարագիրների ընտանիքում: Նախնական կրթութիւնը ստացել է Արենքում, այնուհետեւ շարունակել ուսումնառութիւնը Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնում, իսկ 1946ին շատ հայորդիների նման, ընտանիքով ներգաղթել է Խորհրդային Հայաստան: Եր ինչպէս շնորհալի հայ երիտասարդներից շատերը, հայրենիքում ստացել է իր բարձրագոյն կրթութիւնը, յաջողութեամբ աւարտելով Երեւանի Կոմիտասի անուան Պետական Կոնսերվատորիայի Երաժշտագիտութեան Բաժինը՝ պրոֆ. Մարգարիտ Յարութիւնեանի դեկավարութեամբ: Արդէն նրա դիպլոմային աշխատանքը, որը նուիրուած էր Յովիանենես Երգնեացոյ երաժշտատեսական հայեացքներին, վկայում էր երիտասարդի գիտական հետարքրութիւնների որոշակի ուղղուածութեան մասին: Նա շարունակեց իր մասնագիտական կատարելագործումը Լենինգրադի Ռիմսկի-Կորսակովի անուան Կոնսերվատորիայի ասպիրանտուրայում, աշակերտելով խորհրդային երաժշտագիտութեան կարկառուն ներկայացուցիչներ՝ Ջրհատափոր Կուշնարեանին և Ետրի Կիլինին, դառնալով նրանց արժանի սանը և հետեւորդը: 1962ին պաշտպանեց իր թեկնածուական թեզը՝ «V-VIII Դարերի Հայկական Երաժշտական Մշակույթը» նիւթով:

Թեղուն էին Թահմիզեանի միուրն ու գրիչը: Վերադառնալով հայրենիք և աշխատանքի անցնելով Մատենադարանում, նա խորամուխ եղաւ հայ միջնադարեան մասնագիտացուած երաժշտութեան պատմութեան, տեսութեան և գեղագիտութեան ասպարեզու: Երար ետեից նրա գրչով լոյս տեսան յօդուածներ, ուսումնասիրութիւններ, մենագրութիւններ, առանց որոնց այսօր անհնար է պատկերացնել հայ հոգեւոր երգարուեստի, ինչպէս նաև՝ առհասարակ հայ երաժշտութեան ուսումնասիրութիւնը: Բաւական է յիշատակել 1960-70ականներին լոյս տեսած նրա հիմնական աշխատութիւնները, որպէսզի պարզ դառնայ գիտնականի լայն ընդգրկումը, խորը գիտելիքները, գիտական կարեւոր ընդհանրացումներ կատարելու ունակութիւնը. *Tamburist Arutin, Rukovodstvo po Vostochnoy Muzike* (ժամապորհան Արտիքին, ձեռնարկ արեւելեան երաժշտութեան, Երեւան, 1968), *Ներսէս Ընորհային՝ Երգահան և Երաժիշտ* (Երեւան, 1973), իսկ նրա դրկտորական ատենախոսութիւնը, որը նա պաշտպանեց Սոսկուայում՝ *Teoriya Muziki V Drevney Armenii* (Հին Հայաստանի երաժշտութեան տեսութիւն, Երեւան, 1977), դարձաւ ողջ Խորհրդային Միութեան տարբեր հանրապետութիւններում գործող երաժշտագէտ-միջնադարագէտների և արեւելագէտների սեղանի գիրքը և մնում է այդպիսին առ այսօր: Նա կատարելագէտ տիբրապետում էր գրաքարին, եին և նոր յունարենին, բորբերէնին, ուսւերէնին և երոպական լեզուների, ինչը բոյլ էր տալիս նրան ազատորեն օգտուելու այլանգու զանազան աղբիրներից: Յարգուած և ցանկալի ընդիմախօս և գիտական դեկան էր Ռուսաստանի Դաշնութեան, անդրկովկասեան և միջնասիական հանրապետութիւններում գիտական մասնագիտացուած մի քանի խորհուրդների անդամ էր:

Թահմիզեանի գիտական գործունեութիւնը կարծես ուղղուած էր մեծ Կոմիտասի տեսական աշխատութիւններում դրոյքային ծեսով նշուած կտերի լիարժեք գիտական լուսարաննան ու մեկնարաննանը. մի ծրագիր, որին նա հաւատարիմ ննաց ամրող կեանքում:

Նրա գիտական հետաքրքրութիւնների կարևոր մասն էին կազմում խաղաղիտական ուսումնասիրութիւնները, հայ երաժշտագիտութեան ամենաբարդ եւ կնճռու բնագաւառներից մեկը: Չայլ առ քայլ, փող առ փող նա փորձում էր ըննել հայ միջնադարեան խազային նոտագրութեան վերծանութեան խրին հարցը, իիմնուելով քազմաքի միջնադարեան երաժշտածիսական եւ երգչական մատեանների և ժողովածուների մանրակրկիտ հետազոտման վրայ: Տարիներ անց, արդէն ԱՄՆում, Թահմիզեանը ի մի բերեց իր խազագիտական ուսումնասիրութիւնները՝ երատարակելով *Արդի Խազարանութիւն* արժեքառոր մենագրութիւնը (2003): Իսկ մինչ այդ, դեռևս Հայաստանում, 1985ին լրյու տեսաւ նրա կորողային մենագրութիւններից մեկը՝ *Գրիգոր Նարեկացին* եւ *Հայ Երաժշտութիւնը V-XV Դարերում*, որտեղ իրեն յատուկ խորաբափանցութեամբ, պատմամշակութային լայն ետնախորքի վրայ, երաժշտա-զեղարութեատական երեւյթների համեմատական ընտրեամբ, նա, ներկայացրել էր Գրիգոր Նարեկացուն իրեն իր ժամանակի եւ հայկական վերածնութեան խոշորագոյն երաժիշտ եւ քանաստեղծ:

Նարեկացուն նուիրուած մենագրութիւնից յետոյ Թահմիզեանը երատարակեց ԺՇ. դարի Տաճկահայատանի երեւելի երաժիշտ-տեսարաններից մեկի՝ Յակոբոս Այվազեանի արեւելեան երաժշտութեան ծեռնարկին նուիրուած գիրքը (1989), ըստ արժանույն գնահատելով այդ երախտաւորի վաստակը եւ իրագործելով ծեռնարկի ուսուերեն քարզմանութիւնը արեւմտահայելնից:

1990ականների սկզբին, դեպքերի, այն ժամանակուայ իրողութիւնների նաև ընտանեկան հանգամանքների բերումով, հայ երաժշտագիտութեան ամենաերեւելի դեմքերից մեկը տեղափոխուեց ԱՄՆ, որտեղ լրյու ընծայեց *Կոմիտասը եւ Հայ Ժողովրդի Երաժշտական Ժառանգութիւնը* (1994), *Արմեն Տիգրանները եւ Նրա 'Անոշ'* Օպերան (1995), Սայեաք-Նովան եւ Հայ Գուսանաաշուղական Երգ-Երաժշտութիւնը (1995), *Տիգրան Չոհածեան Կեանը եւ Ստեղծագործութիւնը* (1999, նոյնը՝ նաև անգլերեն, 2001) հիմնարար մենագրութիւնները, իսկ նրա վերջին երատարակուած ուսումնասիրութիւնը եղաւ արդէն յիշատակուած *Արդի Խազարանութիւն* աշխատութիւնը:

Նա հայագիտութեան մեջ որոշակիորեն ստանձնացող հեղինակներից է: Այդ ոլորտի բոլոր գիտածիւղերի մեջ երաժշտագիտութիւնը, այն էլ միջնադարեան երաժշտագիտութիւնը, միշտ եղել է քիչ-երախտաւորների նուիրումի դաշտ: Կարելի է ասել, թէ խորհրդահայ իրականութեան մեջ հայ միջնադարեան երաժշտութեան հարցերով զրադուող երաժշտագիտների շարքում նա յաջորդում էր իր համրաւոր ուսուցչին՝ Կուշնարեանին, եւ իր երախտաշատ աւագ գործընկերոջ Ռոբերտ Աքայեանի արժանի լծակիցն էր: Վստահ կարելի է պնդել, որ այդ բերրի, քայլ գաղափարական վտանգներ ունեցող ժամանակներում հայ միջնադարեան մասնագիտացուած երգը կամ հայ հոգեւոր երգարութեատն իր եկեղեցական միջավայրում, պատմական ետնախորքի վրայ ըննելու մերուբանութիւնը մեծ շափով մշակեց հենց Թահմիզեանը: Անզամ եղարանութիւնն ու ոլորտին յարմար գիտական բառամբերքը, այս “նասնագիտացուածը”, այս “ետնախորքը” եւ էլի բառեր ու բառակապակցութիւններ Մելքոնեան Կրթական Հաստատութեան նախկին սանն այնքան հեշտութեամբ դուրս էր քաշում լեզուի ով ինանայ ինչ խորխորատներից եւ օրգանապէս ձուլում արդի գիտական լեզուին: Նրա

ուսումնասիրութիւններով վերակազմուեց հայ հոգեւոր երգի զարգացման հազարամեակո, ուշմիջնադարեան ու նոր ժամանակների մի քանի հարիւր տարին: Այսօր ինչ էլ գրոի այս ոլորտում կամ նրա կազմած փուլայնացմամբ է գրուելու, կամ նրա հիմնադրումների համեմատ նոր փաստարկների ու հակաֆաստարկների ճամփու է ընթանալու: Հայ միջնադարեան երաժշտութեան ուսումնասիրութեան ոլորտում նրան շրջանցելն այնու թերի գիտական մակարդակի ցուցանիշ է:

Յիրաւի փնտուած մասնագետ էր Թահմիզեանը: Նա դասաւանդում էր Կոնսերվատորիայում եւ այսօր իրեն ենք պարտական, որ 1973ի ուսանող երաժշտագետների եւ կոմպոզիտորների համար ուսումնական ծրագրի մէջ մտաւ «Հայ Միջնադարեան Երաժշտութեան Պատմութիւն եւ Տեսութիւն» (այն ժամանակ արգելուած էր «հոգեւոր» քառ) առարկան, որն արդէն ընդլայնուած եւ խորացուած տեսրով դասաւանդում է առ այսօր: Սերու կապերի մէջ էր ԳԱ Արուեստի Ինստիտուտի հետ, եռանդում գործակցում էր Հայկական Սովետական Հանրագիտարանին, դառնալով նրա մշտական հեղինակներից մէկը եւ անփոխարինելի խորհրդատու: Սիրով մասնակցում էր Հայաստանի Կոմպոզիտորների Սիոթեան աշխատանքներին: Մասնակցեց քազմարի հանրապետական, համամիութենական եւ հեղինակաւոր միջազգային գիտաժողովների և սիմպոզիումների՝ ամենուրեք արժանանալով քարձր գնահատականի եւ ծեռք բերելով միջազգային ճամաչում:

Այսինքն, Նիկողոս Թահմիզեանն ապրեց իսկական գիտնականի, տիպար հայագէտի լիարժեք, լեցուն մի կեանք, բողնելով հարուստ երաժշտագիտական ժառանգութիւն, որից դեռ երկար են օգտուելու յետազայ սերունդների հետազօտողները:

Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի...

ԱՆՆԱ ԱՐԵՎԻՇԱՏԵԱՆ
anna_arevshatyan@hotmail.com

ՈՈՒԹԵՆ ՍԵՐՈՅԻ ՂԱԶԱՐԵԱՆ

(1940-2011)



Ոութեն Սերոյի Ղազարեանը ծնուել է 27 Յուլիս 1940ին Երևանում: 1962ին աւարտել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտետի Հայոց Լեզուի և Գրականութեան բաժինը: 1993ին պաշտպանել է դոկտորական, իսկ 1996ին ստացել է պրոֆեսորի կոչում: 1966ից աշխատում է ԵՊՀ Հայոց Լեզուի և Գրականութեան բաժնում, իսկ 1995ին դարձել է Հայոց Լեզուի Պատմութեան ամբիոնի վարիչ:

Մարդիկ կան, առաւելաբար գիտական լուրջ աշխատանքով կլանուած, ովքեր աննկատ են մնում յայն հասարակութեան համար: Ծրչապատի մարդ չէր նա, քանի նեղ իմաստով, ոչ տառող-խմոր, ոչ էլ «գործ դասաւորող»: Լրջազոյն գիտնական էր, որ իր կեանքի իմաստն ու իմաստաւորումը գտնում էր գիտական տրնանքի մէջ: Նրա մեծարժեք քառարաններն ու ծեռնարկները մնայուն վկայութիւնն են այդ տրնանքի, մնայուն փառքը նրա:

Անուանի լեզուարանը որդին էր ԵՊՀ երախտաւոր դասախոսներից, նշանաւոր հայագետ Սերյո Ղազարեանի: Այս այն դեպքն է, եթե դժուար է գիտական վաստակի առումով նախապատութիւնը տալ նրանցից մեկին՝ հօրը կամ որդուն: Նրանք իրենց մնայուն եւ արժանի տեղն ունեն հայ լեզուարանութեան ասպարեզուն:

Ռուբեն Ղազարեանը ԵՊՀում շարունակել է այն աւանդույթները, որ թողել են հայ յայտնի հայագետները եւ յատկապես Հրաչեայ Աճառեանը՝ ստեղծելով դասագրքային եւ բառարանագրական մեծարժեք գործեր: Նրա Գրաքարի Զեռնարկը (1986, Հ. Աւտիսիսեանի հետ) ունեցել է եօր հրատարակութիւն եւ մօտ բառասուն տարի ԵՊՀ ուսանողների միակ դասագիրքն էր: Երկու հրատարակութիւն է ունեցել Հայոց Լեզուի Պատմութեան Գործնական Դասընթացը (1989, 2002):

Հոչակառորն Նոր Բառզիրը Հայկագեան Լեզուի բառարանի հրատարակութիւնից 170 տարի անց, Ռուբեն Ղազարեանը առաջինն էր ով համարձակուեց ստեղծել գրաքարի նոր բառարան՝ Նոր Հայկագեան Բառարան (1972 եւ 2000), որ կան շատ լրացումներ: Հայագիտութեան մեջ առաջին անգամ նա կազմեց Գրաքարի Հոմանիշների Բառարան, որը լոյս տեսաւ ինչպես Երեւանում, այնպես էլ Լիբանանում:

Ռուբեն Ղազարեանը հեղինակ է Բուսանունների Հայերէն-Հաստիներէն-Ռուսերէն-Անգլերէն-Ֆրանսերէն-Գերմաներէն Բառարամի (1981 եւ 2002), Կենդանիների Անունների Հայերէն-Ռուսերէն-Հաստիներէն Կարգարանական Բառարամի վեց պրակտների՝ կարնասուններ, թոցուններ, սողուններ ու երկակինցաղներ, ծկներ, միջատներ, բազմուանիներ (1992-2001), Թուրքերէն-Հայերէն Բառարամի (2003): Միջին Հայերէնի Բառարանը (2 հատոր, Հ. Աւտիսիսեանի հետ, 1987-1992) բառարանագրական և հայագիտական բացառիկ արժեք է: Միջին Հայերէնի Բառապաշարը (1993), Միջին Գրական Հայերէնի Բառապաշարը (2001), Եցեր Հայ Բառարանագրութեան Պատմութիւնից (2002) հատորները իր յարածամ պրայտումների արդինքն են:

ԵՊՀ Հրատարակութիւնը երախտապարտ է Ղազարեանին՝ հայ լեզուարանութեան համար հսկայական նշանակութիւն ունեցող մի շարք գրքեր խմբագրելու եւ հրատարակութեան պատրաստելու համար: Տասնեակ տարիներ առաջ բարգնանուել էին գերմանացի հայագետ Հայերին Հիրշնանի Հայագիտական Ուսումնասիրութիւնները, եւ Եռգեֆ Կարստի Կիլիկեան Հայերէնի Քերականութիւնը եւ սպասում էին նաև այսպիս կամ իմաստութիւնը: Ղազարեանն է խմբագրել նաև Աճառեանի Ըննութիւն Կիլիկիայի Բարրամի, Գրիգոր Ղափանցեանի, Եղուարդ Աղայեանի մի շարք անտիպ գրքեր:

Մահուանից մի շաբաթ առաջ նա աւարտեց մի նոր արժեքասոր աշխատութիւն՝ «Գրաքարի Դարձուածարանական Բառարան»ը, որը մօտ ժամանակներս լոյս կը տեսնի:

Հայագիտութիւնը ծանր կորուստ կրեց: Ռուբեն Ղազարեանն այլ ծրագրեր էլ ուներ, որոնք ցաւօք սրտի միայն ինքը կարող էր իրականացնել:

ՊԵՐՈՒ ՍՏԵՓԱՆԵԱՆ